Արձանագրություն N: 2

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (ԵՊՀ) կարիքների համար կազմակերպված
«ԵՊՀ-ԳՀԾՁԲ-21/03» ծածկագրով Ինտերնետ կապի ծառայության ձեռքբերման
գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«26» հունվարի 2021 թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Ռ. Աբրահամյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ)

հանձնաժողովի անդամներ՝

Ա. Անատոլյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ)

Վ. Հովհաննիսյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ)

Ն. Մանվելյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ)

Ա. Ապրեսյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ)

հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Աղուզումցյան՝ (Գնման պատասխանատու/ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄՀՄ)

1. Տեղեկություն՝ «ԵՊՀ- ԳՀԾՁԲ-21/03» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով՝ 2021 թ.-ի հունվարի 26-ին, ժամը 11:00-ին՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 հասցեում:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գների վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գները՝ մեկ թվով արտահայտված.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված գինը՝ մեկ թվով արտահայտված /ՀՀ դրամ/
1.	**Ինտերնետային կապի ծառայության տրամադրում** օպտիկամանրաթելային կապուղու միջոցով	7 000 000
2.	**ԵՊՀ Ծաղկաձորի «Համալսարան» ուսումնաարտադրական բազա** (ք. Ծաղկաձոր, Տանձաղբյուրի 29) ինտերնետային կապի տրամադրում	720 000
3.	**Շարժական ինտերնետ կապի տրամադրում ՀՀ տարածքում**	350 000

3. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները

	Մասնակցի անվանումը	Հասցեն և կոնտակտները.
1.	Յուքոմ ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան Սուրբ Գրիգոր Լուսավորիչ 9 Հեռ.՝ +374 95 555054, 11 404401
2.	Տելեկոմ Արմենիա ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, Ազատության 24/1 Հեռ.՝ +374 10 700700

Ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

Յուքոմ ՓԲԸ-ի և Տելեկոմ Արմենիա ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտերը (հայտում առկա փաստաթղթերը) կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

7. Մասնակցի (մասնակիցների) կողմից առաջարկված գները հետևյալն են.

Չ/Հ	Չափաբաժնի անվանումը	Յուքոմ ՓԲԸ		Տելեկոմ Արմենիա ՓԲԸ		
		Գինը առանց ԱԱՀ-ի	Գինը ներառյալ ԱԱՀ-ն	Գինը առանց ԱԱՀ-ի	Գինը ներառյալ ԱԱՀ-ն	Գնման հայտով սահմանված գինը՝ մեկ թվով արտահայտված /ՀՀ դրամ/
1.	**Ինտերնետային կապի ծառայության տրամադրում** օպտիկամանրաթելային կապուղու միջոցով	5900000	7080000	5832500	6999000	7 000 000
2.	**ԵՊՀ Ծաղկաձորի «Համալսարան» ուսումնաարտադրական բազա** (ք. Ծաղկաձոր, Տանձաղբյուրի 29) ինտերնետային կապի տրամադրում	625000	750000	600000	720000	720 000
3.	**Շարժական ինտերնետ կապի տրամադրում ՀՀ տարածքում**	325000	390000	282500	339000	350 000

8. Տեղեկություն՝ մրցույթի արդյունքների ամփոփման մասին.

Ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով՝ հանձնաժողովը որոշեց՝

- ընտրված մասնակից ճանաչելու նպատակով («ԵՊՀ-ԳՀԾՁԲ-21/03» ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան) - գնման ընթացակարգի բոլոր մասնակիցներին հրավիրել միաժամանակյա բանակցությունների, որը տեղի կունենա 2021 թ.-ի հունվարի 29-ին՝ ժամը 11:00, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1, 209 սենյակ հասցեում,
- հանձնարարել հանձնաժողովի քարտուղարին կազմակերպել և անցկացնել այդ բանակցությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0:

Հանձնաժողովի նախագահ (ԳՊ/ԳԱՊ)՝ Ռ. Աբրահամյան _____
ստորագրություն

Բացող անդամներ (ԳՊ/ԲԱ)՝ Ն. Մանվելյան _____
ստորագրություն

Ա. Ապրեսյան _____
ստորագրություն

Գնահատող անդամներ (ԳՊ/ԳԱ)՝ Ա. Անատոլյան _____
ստորագրություն

Վ. Հովհաննիսյան _____
ստորագրություն

Հանձնաժողովի քարտուղար (ՄՀՄ) Ա. Աղուզումցյան _____
ստորագրություն